ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.03.2018թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 95 անդամներից 95 -ը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ՋՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

<u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ</u>

1. Մարզի համայնքների 2017 թվականի տարեկան բյուջեների կատարման և համայնքների 2018 թվականի բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2017 թվականի նկատմամբ:

   /Զեկ.՝ ֆին. և սոցիալ-տնտ. զարգ. վարչ. պետ Գ.Եղիազարյան /

2. Գարնան գյուղատնտեսական, ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման մասին:

   /Զեկ.՝ գյուղ. և բնապահպան.վարչ. պետ Հ.Տերտերյան /

3. Արարատի մարզի 2017թ. սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվության ամփոփում և 2018 թվականին նախատեսված ծրագրերի մասին :

   / Մարզպետ՝ Ա. Գրիգորյան /

Այլ հարցեր:

1.Լսեցին՝

Մարզի համայնքների 2017 թվականի տարեկան բյուջեների կատարման և համայնքների 2018 թվականի բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2017 թվականի նկատմամբ հարցի վերաբերյալ աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց ՝ մարզպետ Ա. Գրիգորյանը:

2. Լսեցին՝

Գարնան գյուղատնտեսական, ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման մասին աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին ՝ մարզպետ Ա. Գրիգորյանը, Վերին Արտաշատ համայնքի ղեկավար Ա. Ղազարյանը **:**

3. Լսեցին՝

Ի գիտություն ընդունվեց Արարատի մարզի 2017թ. սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվության ամփոփում և 2018 թվականին նախատեսված ծրագրերի մասին ՀՀ Արարատի մարզպետ Ա. Գրիգորյանի զեկուցումը:

/կցվում է/

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Ա. Գրիգորյանը:

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- նախապատրաստել տեղեկատվություն համայնքներում առկա ոռոգման և խմելու ջրի հետ կապված խնդիրների վերաբերյալ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի և

‘‘Վեոլիա Ջուր’’ ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ առաջիկայում նախատեսվող հանդիպումների ընթացքում ներկայացնելու նպատակով,

- ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել համայնքների աղբահանության խնդիրները , սահմանել հերթապահություն՝ ապօրինի աղբաթափությունը վերացնելու նպատակով , իսկ դրանց առկայության դեպքում կիրառել համապատասխան տույժեր և տուգանքներ , ինչպես նաև ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ առաջիկա սանիտարական շաբաթօրյակը կազմակերպված անցկացնելու համար,
- կարճ ժամանակահատվածում համայնքը սպասարկող անասնաբույժների հետ կնքել համապատասխան պայմանագրեր ,
- ուշադրության կենտրոնում պահել ոռոգման ջրի հարցը , դրա հետ կապված ցանկացած խնդրի մասին անմիջապես տեղեկացնել մարզպետարան: Գույքագրել նոր մշակվող տարածքները՝ դրանց ոռոգման ջրով ապահովելու հարցը լուծելու նպատակով,
- չմշակվող հողերի պատճառով առաջացող հողի հարկի գծով պարտքերից խուսափելու նպատակով բանակցություններ վարելու, պայմանագրերի կնքման միջոցով չօգտագործվող հողերը տրամադրել մշակության,
- համագործակցել ոստիկանության տարածքային մարմինների հետ՝ համայնքներում հաշվառված, սակայն փաստացի գոյություն չունեցող փոխադրամիջոցները հաշվառումից հանելու նպատակով,
- ‘‘Հյուսիս – հարավ ճանապարհ’’ մայրուղու շինարարության ընթացքում առաջացող խնդիրները /կամուրջների, անցումների կառուցում և այլն/ ներկայացնել մարզպետարան՝ դրանք համապատասխան գերատեսչություններին ներկայացնելու նպատակով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ